

Վարդան Բ. Եսայան

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հայկական բանկերի և առևտրաֆինանսական մյուս հաստատությունների աճի դինամիկան 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին*

Բանալի բառեր – Թիֆլիսի առևտրային բանկ, Փոխադարձ վարկի ընկերություն, բանկային կապիտալ, Հայկական բանկ, շրջանառու կապիտալ, կարճաժամկետ և երկարաժամկետ վարկային ընկերություններ:

Թեև 1860 թ. հիմնադրված Ռուսաստանյան կայսրության պետական բանկը 1866 թ. իր բաժանմունքը բացեց Թիֆլիսում, սակայն 19-րդ դարի 70-ական թվականներից Թիֆլիսի նահանգում արդյունաբերական ձեռնարկությունների, ֆաբրիկա-գործարանային արտադրության ի հայտ գալու հետ մեկտեղ ստեղծվեցին նաև ամբողջովին տեղական՝ հայկական կապիտալով գործող առաջին բանկային հաստատությունները:

Պատճառն այն է, որ կապալառուական, առևտրական և վաշխառուական դրամագլխի տերերն այստեղ առավելապես հայերն էին, որոնց կուտակած «առևտրական դրամագլուխը զգուշորեն անցավ արդյունաբերականի և դանդաղորեն ստեղծեց անհրաժեշտ վարկային հաստատությունները՝ թիկունք կանգնելու ծայր տվող տնտեսության նոր կերպերին»¹: Հայերն առաջինն էին, որ երկրամասում, մասնավորապես՝ Թիֆլիսի նահանգում, ստեղծեցին բանկային և վարկային հաստատություններ:

1871 թ. մայիսի 21-ին հաստատվեց գլխավորապես հայկական դրամագլխով հիմնադրված **Թիֆլիսի առևտրային բանկի** կանոնադրությունը, որը սկսեց գործել 1872 թ. հունվարի 24-ից՝ 500.000 ռուբլի հիմնադիր կապիտալով²: Թողարկվեց 2.500 բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 200 ռուբլի անվանական արժեքով: 1871 թ. նոյեմբերի 23-ին հաստատվեց նաև **Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության** կանոնադրությունը³: Այս երկու բանկային հաստատությունները «հայկական դրամագլխի կուտակման ու քաղա-

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019
ՎԿԱ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2018:
1 Ասանուն Գ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 2 (1870-1900), Էջմիածին, 1922, էջ 47:
2 Տե՛ս Кавказский календарь на 1873 год, Тифлис, 1872, էջ 166-168:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 170:

քականության կենտրոնները դարձան Թիֆլիսում»⁴:

Թիֆլիսի առևտրային բանկը (գտնվում էր Երևանյան հրապարակում) բաժնետիրական ընկերություն էր և գրեթե մեկ տասնամյակ միակ տեղական բանկն Այսրկովկասում: Այն ամենամեծ մասնավոր բանկն էր ոչ միայն Թիֆլիսում, այլև ամբողջ Կովկասում⁵: 1914 թ. բանկն ուներ 6 մլն ռուբլի հիմնադիր ու 3.8 մլն ռուբլի պահուստային դրամագույլ:

Թիֆլիսի առևտրային բանկի հիմնադիրներն էին 1-ին և 2-րդ գիղիայի վաճառականներ, ձեռնարկատերեր, կալվածատերեր, ապագա բանկիրներ Միքայել Ալիխանյանը, Հովհաննես Ամիրադյանը, Միքայել և Գրիգոր Թամամշյանները, Դավիթ Նադիրյանը, Անտոն Ղորղանյանը, Ալեքսանդր Թայիրյանը, Խաչատուր Տեր-Մկրտչյանը, Սպիրիդոն Ղորղանյանը, Ալեքսանդր Օնիկյանը, Էջուր Էջուրյանը, Հովհաննես Անանյանը, Ալեքսանդր Բաբանայանը, Ալեքսանդր և Արտեմ Իզմիրյան եղբայրները, Նիկողոս Միրիմանյանը, Սողոմոն Միրիմանյանը, Նիկողոս Փրիդոնյանը, Հովհաննես Ռոտինյանը, Մովսես և Հովհաննես Ծուրինյան եղբայրները, Գևորգ Դավթյանը, Գևորգ, Իսահակ և Ալեքսանդր Ծովիանյան եղբայրները, Գևորգ Ջաղեթյանը, Հովսեփ Ալեյանը, բժիշկ Միքայել Շահպարտյանը: Նրանք իշխանությունների անհարկի կշտամբանքներից ու կասկածներից զերծ մնալու համար ընդգրկեցին իշխաններ Ն. Բեկթաբեկյանին և Պ. Նակաշիձեին, բարձրաստիճան պաշտոնյաներ Իվան Զուբալովին (Հովհաննես Զուբալյան) և Կ. Ռեյտերին, որին կարճ ժամանակով ընտրեցին բանկի վարչության նախագահ⁶: Բանկի գոյության հետագա ամբողջ շրջանում ղեկավար կազմը՝ բանկի խորհրդի նախագահը, տեղակալները, խորհրդի անդամները, տնօրենները և բանկի կառավարիչը եղել են հայեր: Բանկի երկար տարիների կառավարիչն էր Միքայել Հովհաննեսի Թամամշյանը, որը նախկինում բանկի տնօրեններից էր:

Ուշագրավ է, որ Պետական բանկը որտեղ բացում էր իր բաժանմունքները, դրան զուգընթաց Թիֆլիսի առևտրային բանկը մուտք էր գործում այդ վայրերը, որը «հայկական դրամագույլների հովանավորման ու հավաքման մի ձև էր»⁷: Առևտրային բանկը Պետքանկից հետո 1877 թ. բաժանմունք բացեց Բաքվում, 1888 թ.՝ Բաթումում, 1895 թ.՝ Երևանում⁸:

19-րդ դարի 80-ական թթ. վերջերից Առևտրային բանկի պատմության մեջ սկսվեց նոր շրջան, որը կապված էր Ալեքսանդր Մանթաշյանցի գործունեության հետ: 1882-1884 թթ. նա ընտրվեց բանկի վարչության անդամ, 1885-1889 թթ.՝ բանկի փոխնախագահ՝ միաժամանակ մեծացնելով իր բաժնեմասը, իսկ 1890-ից՝ ցկյանս բանկի նախագահն էր և 75% բաժնեմասով ամենախոշոր բաժնետերը: Ալ. Մանթաշյանցի մահից (1911 թ.) հետո բանկի նախագահը նրա որդին էր՝ Լևոն Մանթաշյանցը: Ալ. Մանթաշյանցի շնորհիվ էր, որ Թիֆլիսի առևտրային բանկը վերածվեց ռուսական կայսրության լավագույն ֆինանսական հաստատություններից մեկի, և միակ բանկն էր

4 Անանուն Գ., նույն տեղում, էջ 47:

5 Տես Սարոլյան Ա., Ալեքսանդր Մանթաշյանց. մեծ վաճառական և բարեգործը, Վիեննա., 1931, էջ 14:

6 Տես Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար-1918), «21-րդ դար», N 1 (19), Եր., 2008, էջ 136:

7 Անանուն Գ., նշվ. աշխ., էջ 47:

8 Տես «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1895, N 6:

Կովկասում, որի բաժնեթղթերը վաճառվում էին Ս. Պետերբուրգի և Մոսկվայի սակարաններում⁹:

1916 թ. հունվարի 23-ին Թիֆլիսի առևտրային բանկը վերանվանվեց **Կովկասյան բանկ** և հաստատվեց նոր կանոնադրություն: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո բանկը 1921 թվականին ազգայնացվեց:

Թիֆլիսի առևտրային բանկի զարգացման շարժը

Տարի	1872	1875	1884	1914
Կանոնադրական կապիտալ (ռուբլի)	500,000			6,000,000
Ակտիվներ (ռուբլի)	1,149,491 ¹⁰			
Տարեկան շրջանառություն (ռուբլի)		6,000,000	գրանցվել է աճ	գրանցվել է աճ
Պահուստային կապիտալ (ռուբլի)				3,800,000

Հայկական կապիտալով ստեղծված մյուս ֆինանսական հաստատությունը, որը նույնպես իր տեսակի մեջ առաջինն էր Կովկասում, **Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունն** էր: Կանոնադրությունը հաստատվել է 1871 թ. նոյեմբերի 23-ին¹¹ և սկսել է գործել 1872 թ. հունվարից: Կանոնադրության¹² համաձայն՝ Փոխադարձ վարկի ընկերությունը կարճաժամկետ վարկային հաստատություն էր, որը հիմնականում սպասարկում էր քաղաքի և գյուղի մանր ու միջին արդյունաբերողներին: Փոխադարձ վարկավորման սկզբունքը նշանակում էր, որ հաճախորդը միաժամանակ պետք է լիներ նաև ընկերության ներդնողը: Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը հիմնադրվել և աշխատում էր փոխադարձ վստահության սկզբունքով, բոլոր անդամները կապված էին փոխադարձ պարտավորություններով և իրավունքներով: Ընկերության վնասները և շահույթը հավասարապես բաժանվում էին նրա անդամների միջև: Բանկը տալիս էր վարկ՝ անշարժ գույքի գրավադրմամբ, բացում էր վարկային հաշիվ ոչ ավելի, քան 6 ամսով, անդամներին տրամադրում էր վարկ: Բանկը ոչ անդամներից ընդունում էր տոկոսաբեր բաժնեթղթեր, կատարում էր դրամական փոխանցումներ Ռուսաստան և արտասահման:

1872 թ. հունվարի 9-ին արդյունաբերող և բանկիր Հովհ. Չիթալյանի տանը հավաքվեցին նոր ստեղծված Փոխադարձ վարկի ընկերության անդամները: Ընկերության կառավարիչ ընտրվեց արդյունաբերող Գրիգոր Աղելխանյանը, տնօրեններ՝ Ալեքսանդր Փրիդոնյանը և Միքայել Թամամյանը, խորհրդի անդամներ՝ Վլադիմիր Կայդանովը, Հովհ. Չիթալյանը, Ստեփան Ջակելին, Ալեքսանդր Մանթաշյանցը և Ալեքսանդր Մատինյանը; Վերաքննիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Գևորգ Եվանգուլյանը (ավելի ուշ՝

9 Sևս Указатель действующих в империи акционерных предприятий и торговых домов, 1. (торгово-промышленные предприятия), под ред. В. А. Дмитриева-Мамонова, С.-Петербург, 1905, էջ 1744:

10 Sևս Кавказский календарь на 1873 год, Тифлис, 1872, էջ 168-169:

11 Sևս նույն տեղում, էջ 170:

12 Sևս նույն տեղում, էջ 170-174: Sևս նաև Устав Тифлисского общества взаимного кредита, Тифлис, 1872:

Ընկերության խորհրդի նախագահ), Եգոր Ծուրինյանը և Պ. Պապայանը, նրանց թեկնածուներ՝ Ն. Փրիդոնյանը, Հովհ. Շադինյանը, Ն. Գարսոյանը¹³: Հետագայում տնօրեններ են եղել Աբգար Արտեմի Հովհաննիսյանը, Արախան Ավետի Բաբայանը: Գ. Աղելխանյանը մինչև 1895 թ. Ընկերության կառավարիչն էր, այնուհետև մինչև մահը՝ 1917 թ., խորհրդի նախագահը:

Ընկերության հիմնադիրները 58-ն էին, իսկ ղեկավար կազմը, բացառությամբ մի քանիսի, գրեթե չփոխվեց: Բանկի նկատմամբ վստահությունը շատ մեծ էր ոչ միայն հայ բնակչության շրջանում, և դրա վկայությունը վարկային այս հաստատության անդամների անընդհատ աճն էր: Այսպես, հիմնադրման պահին բանկն ուներ 530 անդամ, իսկ 1876 թ.՝ 1077 անդամ, որից 700-ը՝ հայեր¹⁴, 1880-ին՝ 1117 անդամ՝ 5.915.610 ռուբլի ապահովված կապիտալով և 657.290 ռ. շրջանառու կապիտալով, իսկ ընդհանուր շրջանառությունը 125.137.385 ռ. էր¹⁵: 1915 թ. Ընկերությունն ուներ 3102 անդամ, որից հայ՝ 1210-ը¹⁶:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ եթե 1884 թ. Թիֆլիսի առևտրային բանկի շահույթն ավելացել էր 12.5%-ով, ապա Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությանը՝ 15%-ով¹⁷: Հայկական բանկային այս հաստատությունները ֆինանսավարկային գործողություններ էին իրականացնում ոչ միայն Թիֆլիսի նահանգի ներսում, այլև նահանգի և Ռուսաստանի միջև: Այսպես, Թիֆլիսի առևտրային բանկը և Փոխադարձ վարկի ընկերությունը 1880 թ. ռուսական և այլ շուկաներ էին փոխանցել 27 մլն ռուբլի¹⁸: Համեմատության համար նշենք, որ կայսերական Պետբանկի Թիֆլիսի բաժանմունքը 1879 թ. Ռուսաստանի տարբեր քաղաքներ էր փոխանցել 25 մլն ռուբլի¹⁹:

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը 1874 թ. փետրվարի 28-ին Բաքվում բացել է իր բաժանմունքը 28950 հզ. ռուբլի դրամագլխով: Բաժանմունքի նախագահն էր Ստեփան Գրիգորի Այվազյանը²⁰:

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը նույնպես գտնվում էր Երևանյան հրապարակում՝ Ա. Խարազյանի տանը, բայց այն այլևս չէր համապատասխանում բանկի մեծացող պահանջներին: Ընկերությունը ձգտում էր ունենալ իր սեփական շենքը, մանավանդ որ երկար տարիների արդյունավետ գործունեությունը և կուտակած դրամագլուխը տալիս էին այդ հնարավորությունը: 1910 թ. Սոլովակի 7 հասցեում սկսվեց նոր շենքի կառուցումը թիֆլիսահայ ճարտարապետ Մ. Պ. Օհանջանյանի նախագծով, ով նաև գլխավորում էր շինարարական աշխատանքները: Գեղարվեստական հարդարման աշխատանքներն իրականացնում էր Թիֆլիսի հայկական «Նովակ» ընկերությունը: 1915 թ. ավարտվեց նոր շենքի կառուցումը, որի բացումը

13 Տե՛ս «Մշակ», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1872, հունվարի 20, N 3:

14 **Երիցյան Ա.**, Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրությունը, «Փորձ», միամյա հանդես, Թիֆլիս, 1879, հոկտեմբեր, N 10, էջ 29:

15 Տե՛ս Кавказский календарь на 1880 год, Тифлис, 1879, էջ 208:

16 Տե՛ս **Դադայան Խ.**, նշվ. աշխ., էջ 136:

17 Տե՛ս Кавказский календарь на 1887 год, Тифлис, 1886, էջ 186:

18 Տե՛ս **Исмаилова А. М.**, Банки и банковские учреждения Закавказского края (последняя треть XIX- начало XX века), «Вестник Челябинского государственного университета», 2015, N 24, էջ 51:

19 Տե՛ս **Бакрадзе Г. К.**, Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX веке, Тбилиси, 1958, էջ 83:

20 Տե՛ս Кавказский календарь на 1914 год, Тифлис, 1913, էջ 170-171:

տեղի ունեցավ հուլիսի 23-ին: Շենքը կահավորված էր ժամանակի նորագույն տեխնիկայով, անվտանգության, հակահրդեհային և լուսավորության առաջավոր համակարգերով, իսկ 844 հատուկ բանկային չիրկիզվող պահարանները պատրաստել էր գերմանական «Արնհեյմ» ֆիրման: Շենքը ճարտարապետական անկրկնելի կառույց էր, որը մեծ տպավորություն էր թողել ներկաների վրա՝ «ներկայանալի հաստատություն ներկայանալի շենքում»²¹– գրել է ժամանակի մամուլը: Այն Թիֆլիսի ամենագեղեցիկ հասարակական շինություններից է (ներկայիս՝ Վրաստանի պետական բանկ), և պատահական չէ, որ 1915 թ. ծխախոտի արդյունաբերող Ն. Բոգարջյանցի բնակելի տան հետ միասին ճանաչվել է լավագույն ճակատային մասով շենքը Թիֆլիսում²²:

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության զարգացման շարժը

Տարի	1872	1880	1893	1894	1913
Կանոնադրական կապիտալ (ռուբլի)	68,400 ²³	5,915,610			
Ակտիվներ (ռուբլի)	3,439,880 ²⁴				9,107,748
Պահուստային կապիտալ (ռուբլի)				150,000 ²⁵	
Շրջանառու կապիտալ (ռուբլի)		657,290			
Ընդհանուր շրջանառություն (ռուբլի)		125,137,385	138,018,430	199,830,064	
Դրամագլուխ (ռուբլի)				919,160	
Ընթացիկ հաշիվ (ռուբլի)				Ավելացել է 204,370-ով	
Եկամուտ (ռուբլի)			116,269 ²⁶		

1908 թ. հունվարի 25-ին բացվեց **Թիֆլիսի փոխադարձ վարկի 2-րդ ընկերությունը**, որի կանոնադրությունը հաստատվել էր 1907 թ. հունիսի 7-ին: Հայկական դրամագլխով ստեղծված այս բանկային հաստատության հիմնադիր կապիտալը 391.970 հզ. ռուբլի էր: Ընկերության խորհրդի նախագահն էր Զաքար Դավիթի Մամուլյանը, խորհրդի անդամները՝ Սերգեյ Դավիթի Մելքումյանը, Գևորգ Պավելի Մելիք-Ղարաբյոզյանը²⁷:

Թիֆլիսի նահանգի քաղաքային հասարակական բանկերից նշանավոր էր 1881 թ. հիմնադրված **Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերությունը**, որը երկարաժամկետ վարկային հաստատություն էր: Այն տեղակայված էր բանկի ղեկավարներից մեկի՝ Գևորգ Բոգդանի Տեր-Ասատրյանի տա-

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

21 «Тифлисский листок», 22 июля, 1915 г.
 22 Տես **Мамулов С. С.**, Армяне в Грузии. М., 1995, էջ 133:
 23 Տես Кавказский календарь на 1873 год, Тифлис, 1872, էջ 170:
 24 Տես նույն տեղում:
 25 «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1894, N 3:
 26 Տես նույն տեղում:
 27 Տես Кавказский календарь на 1914 год, Тифлис, 1913, էջ 184-185:

նր: Վարկային այս հաստատությունը գտնվում էր քաղաքային ինքնավարության մարմինների հսկողության տակ: Այս տիպի բանկերի կապիտալը ձևավորվում էր քաղաքային բյուջեի միջոցներից: Նրանք ստեղծվում էին քաղաքային դումաներին կից և կատարում էին հիմնականում այն գործառնությունները, ինչ բաժնետիրական, առևտրային բանկերը և փոխադարձ վարկի ընկերությունները: Բացի դրանից՝ նրանք իրավունք ունեին վարկ տրամադրելու մասնավոր անձանց՝ քաղաքային անշարժ գույքի (ֆաբրիկա և գործարան, տուն, խանութ և այլն) գրավի դիմաց մինչև 15 տարի ժամկետով: Շահույթն օգտագործվում էր քաղաքի բարեկարգման և բարեգործական նպատակների համար: Ընկերության անդամները տարեկան ստանում էին 5% շահույթ: Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերությունն ուներ գործունեության նեղ շրջանակ. վարկ էր տրամադրում միայն Թիֆլիսում անշարժ գույքի գրավի դիմաց²⁸: Նա գրավի դիմաց տարեկան տալիս էր 10.133 հզ. ռուբլու վարկ, չունեի պահուստային կապիտալ և չէր վճարում տոկոսներ, ուստի չէր հետապնդում շահույթի նպատակ, այլ բացառապես բավարարում էր իր անդամների կարիքները²⁹:

Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերության հիմնադիրները, նախագահները, կառավարիչները հայեր էին: 1880-ական թվականներին ընկերության նախագահն էր Նապոլեոն Ամատունին, տնօրենները՝ Նիկոլայ Գարսոյանը և Գ. Տեր-Ասատրյանը³⁰, ով ավելի ուշ՝ 1900-ական թթ., դարձավ բանկի կառավարման խորհրդի նախագահ: 1890-ական թվականներին ընկերության խորհրդի նախագահն էր Անտոն Դորդանյանը (Կորգանով): 1916 թ. բանկի կառավարիչն էր **Ալեքսանդր Խատիսյանը**:

Հայկական բանկային հաստատություններն աչքի էին ընկնում բարեգործական ձեռնարկներով: Նրանք հարյուր հազարավոր ռուբլիների նվիրատվություններ են կատարել Ամենայն Հայոց կաթողիկոսին և Մայր աթոռին, Թիֆլիսի հայոց բարեգործական և Կովկասի հայոց բարեգործական ընկերություններին, արևմտահայ գաղթականներին, կրթական հաստատություններին, տարբեր հիմնադրամներին, բարեգործական և աղքատախնամ ընկերություններին³¹: 1897 թ. Թիֆլիսի առևտրային բանկը, իր հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ, բացի իր ծառայողների գանձարանին 4.000 ռուբլի հատկացնելուց, 12.000 ռուբլի է նվիրաբերել բարեգործական նպատակների համար³². տարվա ընթացքում պարբերաբար նվիրատվություններ է կատարել արևմտահայ գաղթականներին (5000 ռ.), Թիֆլիսի բարեգործական ընկերությանը (2000 ռ.), մյուս բարեգործական ընկերություններին (5000 ռ.)³³:

Երբ առաջացավ պոլիտեխնիկական ինստիտուտ հիմնելու հարցը, հայկական բանկերը համաձայնեցին ֆինանսավորել դրա կառուցումը՝ Թիֆլիսում բացվելու պայմանով, քանի որ դրա համար մրցակցում էին Բաքուն ու Թիֆլիսը: Իսկ երբ որոշակի դարձավ պոլիտեխնիկումի

28 Տես **Туманов Г. М.**, Кавказская справочная книга составленная старожилом, Тифлис, 1888, էջ 352:

29 Տես **Сазонов А. Н.**, Армяне на Кавказе. Статистические наброски, «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1898, էջ 263-264:

30 Տես Кавказский календарь на 1887 год, Тифлис, 1886, էջ 30:

31 Տես «Մուրճ», Թիֆլիս, 1894, ապրիլ, N 4:

32 Տես «Մուրճ», Թիֆլիս, 1897, հունվար, N 1:

33 Տես «Մուրճ», Թիֆլիս, 1897, մայիս, N 5:

Թիֆլիսում բացվելու հեռանկարը, Քաղաքային վարկի ընկերությունը և Առևտրային բանկը տրամադրեցին 50.000-ական ռուբլի³⁴, իսկ Փոխադարձ վարկի ընկերությունը՝ 10.000 ռուբլի: Պետք է նշել, որ պոլիտեխնիկումի հիմքի վրա 1918 թ. ստեղծվեց Թիֆլիսի պետական համալսարանը:

Թիֆլիսում գործում էին նաև մասնավոր բանկեր, որոնք պատկանում էին առանձին կապիտալիստ բանկիրների: Դրանց մեջ առավել հայտնի էին «Ծովհանյան և ընկ.», Փրիդոնյանների, Հովհ. Չիթախյանի բանկային գրասենյակները³⁵: Բանկ ունեին նաև Փիթոյանները: Հովհ. Չիթախյանի բանկն ուներ 13 միլիոն 608 հզ. ռուբլու տարեկան դրամաշրջանառություն, իսկ «Ծովհանյան և ընկ.» բանկային տունը՝ 40 մլն ռուբլու շրջանառություն³⁶:

19-րդ դարի 80-ական թթ. երկրորդ կեսից բանկային կապիտալը սկսեց ներթափանցել արդյունաբերական ոլորտ: Այսպես, բանկիր Հովհ. Չիթախյանը վարկերի միջոցով աստիճանաբար իրեն ենթարկեցրեց Գ. Միրզոյանի բամբակե գործվածքեղենի խոշոր գործարանը և 1888 թ. վերջնականապես դարձավ դրա սեփականատերը:

1912 թ. թիֆլիսցի մի քանի հայ առևտրաարդյունաբերողներ Բաքվի հայ դրամատերերի հետ որոշեցին Թիֆլիսում հիմնել վաճառականական բանկ, որի կանոնադրությունը նման էր Առևտրային բանկի կանոնադրությանը և սկսեցին մրցակցել նրա հետ³⁷: Ստեղծվեց նախաձեռնող հանձնաժողով, որը գլխավորում էր թիֆլիսցի վաճառականական ավագ, Կովկասի փոխարքայի խորհրդական Արկադի Նազարեթի Միլյանը³⁸: 1912 թ. նոյեմբերի 30-ին ստեղծվեց Թիֆլիսի վաճառականական բանկը 5 մլն ռուբլի հիմնադիր կապիտալով, բաժնետոմսերը՝ 250 ռ. անվանական արժեքով, որոնք տարածվեցին Այսրկովկասի հիմնականում հայ բնակչության շրջանում: 1913 թ. սկզբին տեղի ունեցավ բաժնետերերի ժողով, որը հաստատեց բանկի կանոնադրությունը և կառավարիչ առաջարկեց Բարսեղ Հովսեփի Տեր-Ջաքարյանին, որը ռուսական խոշոր Ազով-Դոնյան բանկի Ղրիմի բաժանմունքի նախկին կառավարիչն էր: Ընտրվեցին կառավարման խորհրդի երկու անդամներ՝ Մ. Բերբերյանը և Ի. Խուդադյանը³⁹: Հիմնադիրները և բանկի խորհրդի անդամներն էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանը, Արամ Բաղդասարյանը, Միքայել Արամյանցը, Մկրտիչ Քալանթարյանը, Միքայել Բոզարջյանցը, Արտաշես Էնֆիաջյանցը, Հարություն Սեյլանյանը, Սերոբ Գյուլբենկյանը և ուրիշներ: Չանցած երեք տարի բանկի գործերը պահանջեցին նոր միջոցների ներգրավում, ինչի համար թողարկվեցին լրացուցիչ 5 մլն ռուբլու բաժնետոմսեր, որոնք արագորեն իրացվեցին: Այդ տարիներին բանկը դարձավ խոշոր և վարկունակ հաստատություն ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանում⁴⁰:

Հայկական դրամագլխով բանկային հաստատություններ ստեղծվում էին ոչ միայն Թիֆլիսում, այլև նահանգի զավառներում, մասնավորապես՝

34 Տե՛ս «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1898, N 1:

35 Տե՛ս Туманов Г. М., նշվ. աշխ., էջ 352:

36 Տե՛ս Исмаилова А. М., նշվ. աշխ., էջ 51:

37 Տե՛ս Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 15-16:

38 Տե՛ս Оганджян А. А., Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка», ՊԲՀ, 1970, N 1, էջ 230:

39 Տե՛ս նույն տեղում:

40 Տե՛ս նույն տեղում:

հայկական Զավախքում և Բորչալուում (Տաշիր-Լոռի): 1911 թ. փետրվարի 10-ին հաստատվեց Ախալքալաքի փոխադարձ վարկի ընկերության կանոնադրությունը, որը սկսեց գործել 1911 թ. հոկտեմբերի 20-ից՝ 4885 հզ. ռուբլի հիմնադիր կապիտալով, 78337 հզ. ռուբլի ակտիվներով: Ընկերության նախագահն էր Հովհ. Քանանյանը, խորհրդի անդամները՝ Սուրեն Հարությունյանը, Խաչատուր Կարապետյանը⁴¹: Բացի այդ, վարկային փոքր ընկերություններ էին գործում Բորչալուի Բոլնիս-Խաչեն բնակավայրում (հիմնադրվել է 1911 թ., 131 անդամ), Ախալքալաքում (հիմնադրվել է 1912 թ., 247 անդամ)⁴² և այլ վայրերում:

Առաջին աշխարհամարտի նախօրեին և պատերազմի սկզբնական փուլում զուտ հայկական կապիտալով բանկերի ղեկավարների շրջանում հասունացավ իրենց հնարավորությունները միավորելու և միասնական Հայկական բանկ ստեղծելու գաղափարը, ինչի համար ձեռնարկվեցին գործնական քայլեր: Հայ ձեռնարկատերերը և բանկիրները մտադիր էին ստեղծել ռուսական կայսրությունում գոյություն ունեցող երկու բանկային հսկաների՝ Վոլգա-Կամսկյան և Ազով-Դոնյան բանկերի նման բանկային խոշոր հաստատություն⁴³:

Հայկական միասնական բանկ հիմնելու գաղափարը պատկանում էր մոսկվայաբնակ շուշեցի բանկիրներ Գրիգոր, Հովհաննես և Նիկողոս (Նիկոլայ) Իսահակի Ժամհարյան եղբայրներին, որոնք 1874 թ. Մոսկվայում հիմնել էին «Ժամհարյան եղբայրներ» բանկային տունը: Հայկական բանկի մեջ պետք է միավորվեին «Ժամհարյան եղբայրներ» բանկային տունը, Թիֆլիսի առևտրային բանկը, Թիֆլիսի վաճառականական բանկը, հայ ձեռնարկատերերին պատկանող Դոնի Ռոստովի վաճառականական բանկը և Հովհաննես Չիթախյանի բանկային տունը: 1916 թ. կեսին Ժամհարյան եղբայրներից կրտսերը՝ Նիկողոսը եկավ Թիֆլիս՝ ճանապարհին կանգ առնելով Դոնի Ռոստովում, տեղի վաճառականական բանկի ղեկավարությամբ նոր նախագծի մասին տեղեկացնելու և համաձայնություն ստանալու համար: Թիֆլիսում վաճառականական բանկի շենքում տեղի ունեցավ հայկական բանկերի ղեկավարության ներքին շրջանակի խորհրդակցություն, որին մասնակցում էին Ն. Ժամհարյանը նաև՝ Ռոստովի վաճառականական բանկի անունից, Կովկասյան բանկից՝ Մ. Թամամշյանը և Ի. Ծովիանյանը (բանկիր Հովհաննես Ծովիանյանի որդին), Թիֆլիսի վաճառականական բանկից բանկի կառավարիչ Բ. Տեր-Ջաքարյանը և կառավարման խորհրդի անդամներ Մ. Բերբերյանն ու Ա. Օհանջանյանը⁴⁴:

Մի քանի օր անց տեղի ունեցավ երկրորդ խորհրդակցությունը՝ ընդլայնված կազմով: Բացի բանկերի կառավարիչներից և մասնագետներից՝ մասնակցում էին նաև բանկերի խոշոր բաժնետերեր, բանկերի խորհուրդների անդամներ, խոշոր արդյունաբերողներ, Բաքվի նավթային ֆիրմաների ներկայացուցիչներ: Հավաքվել էր մոտ 25 մարդ, որի կեսից ավելին միլիոնատերեր էին: Որոշվեց 1916 թ. վերջին-1917 թ. սկզբին կազմել կա-

41 Стен Кавказский календарь на 1914 год, Тифлис, 1913, էջ 170-171:

42 Стен նույն տեղում, էջ 202:

43 Стен նույն տեղում, էջ 231-232:

44 Վերջինս հոդվածի ձևով գրված՝ **Оганджаниян А. А.**, Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка» հուշերի հեղինակն է: Стен ՊԲՀ, 1970, N 1, էջ 231:

նոնադրություն և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ կազմկոմիտեի համար ժամհարյան եղբայրների բանկում բացել ընթացիկ հաշիվ: Կազմկոմիտեի անդամներ պետք է լինեին ժամհարյան եղբայրները և Ռոստովի, Թիֆլիսի վաճառականական բանկերի ու Կովկասյան բանկի ներկայացուցիչները:

Սակայն Համաշխարհային պատերազմի ավարտական փուլում Ռուսաստանի ծանր դրությունը, 1917 թ. հեղափոխություններն ու Ռուսական կայսրության փլուզումը ի չիք դարձրին Հայկական բանկի ստեղծման գաղափարի իրականացումը:

Այսպիսով, 19-րդ դարի 70-ական թթ. Այսրկովկասում կապիտալիզմի զարգացումը հանգեցրեց արտաքին ու ներքին շուկաների արագ ընդլայնմանը, ապրանքադրամաշրջանառության աճին, որոնք էլ իրենց հերթին նպաստեցին բանկային և վարկային հաստատությունների ստեղծմանը: Այսրկովկասում առաջին բանկային հաստատություններն ի հայտ եկան Թիֆլիսի նահանգում, և դա պատահական չէր: Թիֆլիսն Այսրկովկասի, ընդհանրապես՝ Կովկասի փոխարքայության վարչական և տնտեսական կենտրոնն էր, իսկ Թիֆլիսի նահանգի առևտրի մեծագույն մասը կենտրոնացած էր հայ վաճառականության ձեռքում, որն էլ իր կուտակած առևտրական կապիտալը 19-րդ դարի 70-ական թվականներից վերածեց արդյունաբերական ու բանկային կապիտալի: Թիֆլիսի նահանգի գրեթե ամբողջ բանկային և վարկային գործը, մասնավոր բանկային բիզնեսը տնօրինում էին հայկական ֆինանսական կապիտալի ներկայացուցիչները, և «արդյունաբերության ու ֆինանսների բնագավառում գերակշռությունը պատկանում էր հայերին և միմիայն նրանց»⁴⁵:

Ընդլայնվեցին և ամրապնդվեցին բանկերի կապերն արդյունաբերական ձեռնարկությունների հետ: Բանկերը սկսեցին վերահսկել նրանց գործունեությունը, տեղի ունեցավ բանկային կապիտալի սերտաճում արդյունաբերականի հետ, և կազմավորվեց ֆինանսական կապիտալը: Այսրկովկասի համար դրա լավագույն օրինակը, թերևս, Ալ. Մանթաշյանցի բանկային ու արդյունաբերական գործունեությունն էր: Ալ. Մանթաշյանցի շոնդալից մուտքը նավթարդյունաբերություն պայմանավորված էր մի քանի հիմնական գործոններով, որոնցից առաջինը Թիֆլիսի առևտրային բանկի վարչության նախագահ լինելու հանգամանքն էր, ուր «նա տիրում էր դրամական զգալի միջոցների, իսկ նավթարդյունաբերությունը շարունակ պահանջում էր նորանոր ներդրումներ»⁴⁶: Արդյունաբերության ոլորտ բանկային կապիտալի ներթափանցման ապացույցն էր բանկիր Հովհ. Չիթախյանի օրինակը, որն, ինչպես նշեցինք, աստիճանաբար իրեն ենթարկեց Գ. Միրզոյանի խոշոր գործարանը:

Հայկական կապիտալով բանկային և վարկային երկու հսկաները՝ Թիֆլիսի առևտրային բանկը և Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերությունը, մնացին անմրցակից ֆինանսական հաստատություններ ամբողջ Կովկասում՝ ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը: Այս առումով բերենք հատկանշական մեկ օրինակ վրացի հեղինակից: 1885 թ. Թիֆլիսի

45 Անանուն Գ., նշվ. աշխ., էջ 54:

46 Տեն Գաղայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Եր., 2006, էջ 25-26:

առևտրային բանկի տարեկան ընդհանուր շրջանառությունը կազմել է 156 մլն ռուբլի, Փոխադարձ վարկի ընկերությանը՝ 159 մլն ռուբլի, Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերությանը՝ 21 մլն ռուբլի, մինչդեռ վրաց վերնախավի հիմնած Թիֆլիսի ազնվականական հողային բանկինը՝ ընդամենը 6.116 հզ. ռուբլի⁴⁷:

Ինչ վերաբերում է Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերությանը, այն բացառապես հայկական էր, ուստի լրացուցիչ և կարևոր լծակ էր հայերի ձեռքին քաղաքային բյուջեի տնօրինումը, ֆինանսական շարժերը, ծախսերի բաշխումը վերահսկելու գործում, քանի որ Թիֆլիսի քաղաքագլուխները և քաղաքային դումայի իրավասուների (անդամներ, ձայն ունեցողներ) մեծամասնությունը մշտապես հայեր էին:

Հայկական ֆինանսաբանկային կապիտալի խոշորագույն ներկայացուցիչները փորձեցին կատարել հաջորդ քայլը՝ բանկային կապիտալի համակենտրոնացումը, որի արտահայտությունն էին Հայկական միասնական բանկի ստեղծման գաղափարը և դրա իրականացմանն ուղղված գործնական քայլերը: Ստեղծվելիք Հայկական բանկը հավակնում էր դառնալու ռուսական հզոր բանկերի մրցակիցը, սակայն բոլշևիկյան հեղաշրջումն ու Ռուսաստանյան կայսրության կործանումը անհնար դարձրին դրա իրագործումը:

Խորհրդային իշխանություններն ազգայնացրին ամեն ինչ՝ կապիտալը, գույքը, բանկային շենքերն ու տները: Բայց պահպանվեցին ճարտարապետական հոյակերտ կառույցները, որոնք Թիֆլիսի նահանգի, ողջ Այսրկովկասի և անգամ Ռուսաստանյան կայսրության ֆինանսատնտեսական կյանքում հայկական դրամագլխի երբեմնի ազդեցիկ ներկայության և խաղացած լուրջ դերակատարության լուռ ու գեղեցիկ վկաներն են այսօր:

Վարդան Բ. Նսայան – գիտական հետաքրքրությունները կապված են 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Թիֆլիսի նահանգում հայկական առևտրա-արդյունաբերական կապիտալի ձևավորման ու գործունեության և Թիֆլիսի զարգացման վրա նրա ունեցած ազդեցության համակողմանի ուսումնասիրության հետ:

47 Տե՛ս **Бакрадзе Г. К.**, նշվ. աշխ., էջ 83-84:

THE ARMENIAN CAPITAL IN TIFLIS

The dynamics of Growth Rates of Armenian Banks and Other Commercial and Financial Institutions at the end of 19th and early 20th century

Vardan B. Yesayan

Key words – Commercial Bank of Tiflis, Mutual Credit Organization, banking capital, Armenian bank, working capital, short-term and long-term credit organizations.

Armenian banking institutions were established in the state of Tiflis during the 70s of 19th century, being the first of their kind in the Caucasus region. Some of the larger banks established with Armenian capital were Commercial Bank of Tiflis, Mutual Credit Organization and Tiflis City Credit Organization, which played a key role in the financial-economic life of state of Tiflis and Transcaucasia region, as well as stood out with the activity of their charitable organizations. Banking institutions with Armenian capital have been established not only in Tiflis, but also in other settlements of the state.

With the establishment and development of banking institutions, their ties with the industrial sector grew stronger, which eventually led to the merger of the two and the establishment of financial capital.

The larger representatives of Armenian financial-banking capital made an attempt to establish a unified Armenian bank, which could compete with large Russian banks. However, Bolshevik revolution and the fair of Russian Empire made the realization of this project impossible.

Резюме

АРМЯНСКИЙ КАПИТАЛ В ТИФЛИСЕ

Динамика роста армянских банков и других торгово-финансовых учреждений в конце 19-го – начале 20-го века

Вардан Б. Есяян

Ключевые слова – Тифлисский торговый банк, Взаимная кредитная компания, банковский капитал, Армянский банк, оборотный капитал, краткосрочные и долгосрочные кредитные компании.

В 70-х годах 19-го века в Тифлисской губернии первыми на всей территории Закавказья были созданы армянские банковские учреждения. Важную роль в финансово-промышленной жизни Тифлисской губернии и

Закавказья выполняли созданные на чисто армянском капитале крупные банки: Тифлисский торговый банк, Взаимная кредитная компания, Тифлисская городская кредитная компания, которые также выделялись деятельностью своих благотворительных организаций. Банковские предприятия с чисто армянским капиталом были созданы не только в Тифлисе, но также в других населенных пунктах губернии.

С созданием и развитием банковских предприятий углублялись их связи с промышленным сектором, что в конечном счете привело к их интеграции и созданию финансового капитала.

Крупнейшие представители армянского финансово-банковского капитала попытались создать Армянский единый банк, который претендовал стать конкурентом крупных российских банков. Однако большевистская революция и крушение Российской империи сделали это невозможным.

REFERENCES

1. **Ananun D.**, Rusahayeri hasarakakan zargacumə, hat. 2, (1870-1900), Ejmias'in, 1922, ej 47 **(in Armenian)**.
2. **Bakradze G. K.**, Vozniknovenie i razvitie kapitalistich eskoj promychlennosti v Gruzii v XIX veke, Tbilisi, 1958, s. 83 **(in Russian)**.
3. **Dadayan X.**, Hayoc arjev'tratntesakan nerkayut'yunə T'iflisum (ush mijnadar -1918), «21-rd dar», N 1 (19), Ye'r., 2008, ej 136 **(in Armenian)**.
4. **Ericyan A.**, T'iflisi hajq yev' noca vic''akagrut'yu'nə, «Pordz» miamsya handes, T'iflis, 1879, hoktember, N 10, ej 29 **(in Armenian)**.
5. **Ismailova A. M.**, Banki i bankovskie ucherejdenija Zakavkazskogo kraja (poslednjaja tret' XIX- nachalo XX veka), Vestnik Cheljabinskogo gosudarsvennogo universiteta, 2015, N 24, s. 51 **(in Russian)**.
6. **Kavkazskij kalendar' na 1873 god**, Tiflis, 1872, s. 166-174 **(in Russian)**.
7. **Mamulov S. S.**, Armjane v Gruzii, M., 1995, s. 133 **(in Russian)**.
8. «Msh'ak», shabat'at'ert', T'iflis, 1872, hunvari 20, N 3 **(in Armenian)**.
9. «Murc''», amsagir, T'iflis, 1894, N 3, 4, 1895, N 6, 1897, N 1, 5, **(in Armenian)**.
10. **Saruxan A.**, Agh'eqsandr Mant'ashyanc. Mec' vac''arakann yev' baregorc'ə, Vienna, 1931, eg 14 **(in Armenian)**.
11. **Sazanov A. N.**, Armjane na Kavkaze. Statisticheskie nabroski. Bratskaja pomoch' postradavshim v Turcii armjanam, Moskva, 1898, s. 263-264 **(in Russian)**.
12. «Tiflisskij listok», 22 ijulja, 1915 g. **(in Russian)**.
13. **Tumanov G. M.**, Kavkazskaja spravoch'naja kniga sostavljonnaja starazhilom, Tiflis, 1872 **(in Russian)**.
14. Ukazatel' dejstvujush'ix v imperii akcioner'nyx predpriyatij i torgovyx domov, 1. (torgovo-promysh'lennye predpriyatija), pod red. V. A. Dmitreva-Mamontova, S. Peterburg, 1905, s. 1744 **(in Russian)**.
15. **Ustav Tiflisskogo obsh'estva vzaimnogo kredita**, Tiflis, 1872 **(in Russian)**.